

«ՍԵՅՍՄԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՅԵՆԶԻԱ ՔՊԼ



ՀԱՍՏԱՑՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

«17» փետրվարի 2026թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե25-26

Ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ.Էմինի հ.123 հասցեում գտնվող շինության տեխնիկական վիճակի, այն կաթսայատան վերակառուցման տեխնիկական հնարավորության վերաբերյալ

Աշխատանքը կատարված է շինության սեփականատեր «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան, բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության» պատվերով:

13.02.2026թ. կատարվել է շինության ակնադիտական ռետազննություն:

Հետազննված շինությունը բաղկացած է մեկ կիսանկուղային հարկից: Հատակագծում ունի ուղղանկյունաձև ուրվագիծ:

Կառուցվել է 1970-ական թվականներին:

Կոնստրուկտիվ սխեման լուծված է լայնական և երկայնական կրող քարե պատերի և ծածկի համատեղ աշխատանքով:

Արտաքին վերգետնյա պատերը տուֆաքարերի «միդիս» տիպի շարվածքի են, 50սմ հաստությամբ:

Ծածկը իրականացված է հավաքովի երկաթբետոնյա կողավոր սալերով, տեղադրված առանց հեռացումների՝ միաձույլ տեղամասերի:

Տանիքը հարթ է, կազմակերպված ջրահեռացմամբ:

Նախատեսված է վերակառուցում՝ հատակի նիշի իջեցում, ծածկի նիշի բարձրացում, ներսում կաթսայատան կազմակերպում:

Հեղազնության արդյունքում պարզվել է.

Կառույցի կրող կոնստրուկցիաները և նրանց միացման հանգույցները գտնվում են բավարար տեխնիկական վիճակում: Կառույցի կրող և պատող տարրերում անթույլատրելի դեֆորմացիաներ և վնասվածքներ չկան: Բացակայում են հիմքերի անհավասարաչափ դեֆորմացիաների նշաններ: Շենքի ընդհանուր կոնստրուկտիվ համակարգում չկան նրա շահագործման հուսալիության վրա ազդող վնասվածքներ և թերություններ:

Շենքի վնասվածության աստիճանն գնահատվում է **1-ին կարգի:**

Հիմնվելով հեղազնության արդյունքներին, եզրակացվում է.

Ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ.Էմինի փողոց հ.123 հասցեում գտնվող կաթսայատան շինության փաստացի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության տեսակետից, այն վերակառուցել՝ հատակի նիշը իջեցնել, ծածկի նիշը բարձրացնել, ներսում կաթսայատուն կազմակերպել տեխնիկապես հնարավոր է, պահպանելով հետևյալ դրույթները.

- Ձեռքի կտրող, սղոցող գործիքների օգնությամբ, բացառելով հարվածող, ջարդող գործիքների և մեխանիզմների կիրառումը, կազմատել տանիքածածկույթի շերտերը, ծածկի հավաքովի կողավոր սալերը անջատել չրող կոնստրուկցիաներից, որից հետո միայն ապամոնտաժել ամբարձիչ մեխանիզմով,
- - Ձեռքի կտրող, սղոցող գործիքների օգնությամբ, բացառելով հարվածող, ջարդող գործիքների և մեխանիզմների կիրառումը, կազմատել խարխուլ վիճակում գտնվող արտաքին երկայնական պատը,
- Իրականացնել նոր երկայնական պատի հիմք, տեղադրման նիշը համապատասխանեցնելով գոյություն ունեցող հիմքերի տեղադրման նիշին,
- Իրականացնել նոր երկայնական պատ բարձրացված նիշով,
- Աճեցնել գոյություն ունեցող պատերը մինչև բարձրացված նիշը,

- Իրականացնել նոր ծածկ միաձույլ երկաթբետոնից, թաղնելով պայթյունաանվտանգ հատվածներ,
- Ձեռքի կտրող, սղոցող գործիքների օգնությամբ, բացառելով հարվածող, ջարդող գործիքների և մեխանիզմների կիրառումը, կազմատել հատակի շերտերը և գրունտը, իջեցնելով հատակի նիշը, մինչև հիմքի վերին նիշը,
- Իրականացնել սարքավորումների տակի հիմքեր և նոր հատակ:

Վերը նշված շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել սահմանված կարգով մշակված և համաձայնեցված նախագծի հիման վրա:

Փորձագետ-կոնստրուկտոր



Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ